ՇԱԲԱԹ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1906 — ԹԻՒ 854

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 »
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Rédaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրօշիւրը յանձնված է տպագրութեան։

Բրօշիւրի նպատակն է, առանց խմբծանքի Դաշնակցութիւնր մէջ տեղ գտնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրօշիւրի մէջ փաստաղ դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քարափին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Աւստրիա օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները.

ՄԵՐ ՉԸ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Խմբագրութիւնս պատուիրեալ նամակներով յիշեցուցած է տասնեակ բաժանորդներու տարիներով ունեցած պարտքերնին և խնդրած է որ փութան մաքրել իրենց հաշիւը. Սակայն շատերէն պատասխանը չստացանք. Պէտք է գիտնալ որ տարիներով թերթի պարտք ունենալը ամօթ է և մենք երբեք տրամադիր չենք ձրի թերթ ուղարկել բաժանորդներուն.

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐԻ ՕՐԳԱՆԸ

Թիֆլիզի դաշնակցական անուն կրող մակաբոյծների օրգան «Ռազմիկը». քաղաքական և գաղափարական պոռնկութեան հայելին, ինձ վրա կատարված սպանութեան փորձը հռչակում է գրգռված հայ երիտասարդների գործ, ու սպելով իբր թէ իմ կերած!!! դրամների մասին յայտարարում թէ Թիֆլիզի ամբողջ հայութիւնը ուրախութեան մէջ էր այդ արիւնոտ մահափորձի առթիւ.

Նախորդ յօդուածով արդէն յայտնեցի թէ՝ այդ մահափորձը տեղական շէֆերի կարգադրութեամբ նախապէս պատրաստված մի ստորին դաւադրութիւն էր. ղեկավարութեամբ բժիշկ Եազմաճեանի և Յակոբ Պզտիկեանի, սակայն ինչպէս տեսանք մեր յեղափոխութեան և գաղափարի պոռնիկները քաջութիւնը չունեն իրենց գործը հռչակելու, որովհետեւ բարոյական և օրինական ոչ մի հիմք ունեն պատժի ենթարկելու մի գործիչի՝ որը ինքն է—հակառակ պաշտօնական արգելքի. իր անձնական թերթում հրապարակել իր սոտ կազմակերպութեան դրամ գլտնվելը.

Եւ իրօք, ինչպէս կարելի է արդարացնել իմ դէմ կատարված ոճիրի փորձը՝ մանաւանդ այն օրը, երբ եկել եմ զրպարտիչների երեսին պոռալու՝ «համեցէք, այս տեղ եմ, ձեր և ժողովրդի առջեւը. փաստեցէք ձեր մեղադրանքները»։ Արդարացնել կարելի չէ. բայց վատաբար կարելի է ուրանալ, ինչպէս վատաբար յարձակում գործեցին, և փաթաթել ոճիրը հայ երիտասարդների վզին.

Պոռնկացած այդ օրգանը, որ յեղափոխութիւնը ծաղրելի դարձնելու համար կոչվում է «Ռազմիկ», լրբութիւնը ունի նաեւ յայտարարելու թէ՝ Թիֆլիզի ամբողջ հայութիւնը ուրախութեան մէջ էր գործադրված ոճիրի պատճառով...

Ոչ, մակաբոյծներ, Թիֆլիզի հայութիւնը միայն զզւանք զգաց ձեր անտեղի, անարդարանալի և ստոր ոճրափորձի հանդէպ և համոզվեց որ նա տեղի ունեցաւ ձեր ստորնութիւնները երեւան բերվելու վախից.

Թիֆլիզի հայութեան գիտակից մասը, նոյն իսկ ձեր շարքերից անձամբ այցելեց ինձ իր ցաւակցութիւնը յայտնելու և զզւանքը դէպի ոճրագործներդ.

Հակառակ ձեր սպառնալիքներին, թելագրութիւններին ուսուցիչներ, վաճառականներ, արհեստաւորներ, բազմաթիւ երիտասարդներ, մանաւանդ թանկագին Պետրոս Սէրէմճեանի հայրը, քոյրը, եղբայրը և փեսան անձամբ այցելեցին իրենց ցաւակցութիւնը յայտնելու...

Ոչ, մակաբոյծներ. ձեր քայլը այնքան անմիտ, ապօրինի և Դաշնակցութեան համար արատաբեր էր որ ոչ մի գիտակից, անկեղծ և ձեզնից շահ չըսպասող հայ կարող էր ուրախանալ...

Մի ժամանակ երբ ես գրում էի թէ ոճիրի փորձ էք պատրաստում դուք հերքում, ուրանում էիք, այսօր դուք ձեր գործով փաստեցիք ձեր այդ վատ, դաւաճանական տրամադրութիւնը ու իմ ձեռքը տուիք ձեր բարոյական և խելքի լիակատար սնանկութեան անհերքելի փաստը.

Այո, Պիօնեան, Բարթուղ Զօրեան, բժիշկ Եազմաճեան, Յակոբ Օվաճեան, Յակոբ Պէնլեան. Յակոբ Պզտիկեան, Ռուբէն Զարգարեան Թորգոմ և Շաւարշ ես հրապարակով ձեզ եմ մեղադրում և ձեզ ճանաչում ոճրափորձի հեղինակներ, և Դաշնակցութիւնը ձեզ է որ պէտք է պատժէ....

Դուք վախկոտ ոճրագործներ էք և ուզեցիք անգիտակիցների ձեռքով ձեր ոճիրը կատարել, խաբելով նրանց որ ազգին և յեղափոխութեան ի նպաստ մի մեծ գործ են կատարում.

Դուք խեղճերին գրգռեցիք տռատպելական ստերով և թելադրեցիք վերջ տալ կեանքիս որովհետեւ այդ կեանքի յարատեւումը սպառնում է ձեր գոյութեան դաշնակցական շարքերում...

Դուք ոչ միայն վախկոտ ոճրագործներ էք, միամիտների ձեռքով անձնական հաշիւներ կարգադրող սպանութեան միջոցով, այլ և յիմար էք. որովհետեւ փոխանակ իմ ստեղծած առիթներից օգտվելու և ձեր երեւակայեալ մեղադրանքները հաստատելու, լսարանից խուսափեցիք և ոճրափորձին դիմեցիք...

Դուք ձմեռն էլ փախաք իմ առաջարկած յանձնախումբը կազմելուց.

Ինչի՞. որովհետեւ իմ առաջարկած ազնիւ յայտնի և ճակատ ճակատի գալու միջոցներով կը պարզուէր ձեր ստութիւնը, իսկ ձեր վայրենի միջոցով Վարդօն յաւիտեան կը լռէր...

Ես որոշել էի ցեցերից բերդը՝ Բուլգարիա Թիֆլիզում, քանդել. բայց դուք ձեր ձեռքով տուիք քանդիչ առաջին հարուածը—ձեր ոճրափորձով այդ աղտոտութիւնների կոյտին. ու հայ հասարակութեան պարզեցիք թէ՝ իրօք Ռոստոմ—Պիօնեան մասնաւոր վարժարանը և «Ռազմիկ»ի պոռնկացած խմբագրութիւնը, ոչ այլ ինչ են, եթէ ոչ «արիւն արցունքով հաւաքված դրամներով» պահված որջերը ուր ժողոված են դրել յեղափոխութեան մակաբոյծ վախկոտ ոճրագործները....

ՎԱՐԴՕ

22 Հոկ. 1906 Թիֆլիզ

ԱՆՎԵՐՋ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր գրական Հաջի-Բաբաները բանակռուի բռնուելով երբեք ըստ էութեան բան չեն կարողանում ասել, եւ աշխատում են մի կերպ խուժանի առջեւ իրանց յաղթող ձեւացնել.

Իմ «Խուժանապետներին»! յօդուա-

ծում չէր առած սարգի Դաշնակցութեան բիւրոկրատներից հասցէն, բայց եւ այնպէս սլաքը դիպել էր նպատակին.. Եւ ահա ըստ էութեան բան պատասխանելու փոխարէն, «Ալիքի» ղեկավարները փողոցային տղերանց նման, ըստ սովորութեան, կրկնում են նոյն հայհոյանքները. յաղթական ծամծմութիւններով ասում. «հը՛, վախեցա՞ր մեր անունը տալ. դէ գնա. յաղթեցինք. ծաղրեցինք... Խեղճե՛ր...

Այդ փրկարար սրտաճմլութիւնը, ինչպէս եւ հայհոյական «բելլետրիստիկայի» մէջ անվերջ վարժութիւններ անելը, թողնելով մեր երեւելի գրական «Հաջի-Բուբաներին» անցնենք. Նախ քան բուն հարցին դիմելը, հարեւանցի կերպով ներկայացնեմ մի նոր զրպարտութիւն. եթէ թէ ես այդ պարոնների արարքները սկսեցի մերկացնել միմիայն իմ տեսչական հարցից յետոյ, թէ ես սարի ու կէս է բոլոր ժողովներում, դաշնակցական չէֆերի ներկայութեամբ, խիստ բացասական քննադատական դիրքեմ բռնել դէպի այդ ազգային բիւրոկրատների սակարկան եւ արարքները—այդ պէտք է որ, վերջապէս, քաղաքացիական քաջութիւն ունենան վկայելու մեր այն ինտէլիգէնտները, որոնք տխուր դեր են ստանձնել լինելու դաշնակցականների համար լոկ օգնութեան խողովակ. Թէ մամուլի մէջ ես քննադատական-բացասական դիրք եմ բռնել դէպի դաշնակցութիւնը այն օրից, երբ ցենզուրական պայմանները փոփոխուեցան եւ ազգային բիւրոկրատները դուրս եկան կոնսպիրատիվ դիրքից հրապարակ, սեփական օրգան հիմնեցին ցուցամոլական ռեկլամներ սկսեցին հրապարակել իրանց «շտաբի», «զօրքի», «կուռ ոյժի», «դատաստանական», «պայքարողական» եւ այլն կարգադրութիւնների մասին տպած թռուցիկներով, հրամաններով եւ այլն—այդ պէտք է յայտնի լինի բոլորին, որոնք կարդում են «Մուրճ» ամսագիրը: Հետեւաբար, թէ ժողովներում եւ թէ մամուլի մէջ ես քաղաքական քաջութիւն եմ ունեցել չը ծածկել իմ համոզմունքները եւ կարծիքները. Վեր կենալ այժմ խուժանին գրգռելու համար բանը այնպէս ներկայացնել թէ ես հրապարակ եմ դուրս եկել իմ տեսչական հարցից յետոյ—դա դիտաւորեալ ստախօսութիւն է. մի բան, որ դառել է երկրորդ բնոյթ ազգային բիւրոկրատների համար, շնորհիւ այն հանգամանքի, որ ինտէլիգէնտ խողովակները ներողամիտ քնքշութեամբ են վերաբերվել դէպի ձեր բոլոր պակասութիւնները եւ դուք երես էք առել..

Մի նմուշ էլ «Ալիքի» ղեկավարների լոգիկայից. Եթէ դուք ասէք, օրինակ. «Ռուս բիւրոկրատների, ես այն էլ գիտեմ, որ դուք չէք տարբերում սպիտակը սեւից, շունը՝ գայլից եւ այլն»—միթէ՞ դա նշանակում է թէ՝ ռուսները սեւ են կամ գայլեր են. իսկ «Ալիքի» միւս խմբագիրը ընդունակ է այդպիսի լոգիկական սալտոմորտաների. Չէ՞ք հաւատում. կարդացէք իմ «Ալիքի» մանեւրները յօդուածի վերջին պարբերութիւնը եւ տեսէք թէ ինչ պրովոկատորական մետամորֆոզի են ենթարկում խօսքերս «Ալիքի» վարած բանակռւի մէջ. Ո՛չ պրովոկատորը վերեւ բերած օրինակ-նախադասութիւնից պէտք է միայն եզրակացնի որ ռուս բիւրոկրատներն այնքան թիւր, տհաս, սխալ «հասկացողութիւն» ունեն, որ չեն զանազանում իրարից շատ տարբեր հասկացողութիւնները.. Այդ է պահանջում լոգիկան, որ պարտադիր չէ համարւում «Ալիքի» խմբագրութեան մէջ(*).

Լ. Ա.

«Մուրճ»

ԱՅԴ ԷՐ ՊԱԿԱՍ

Սպառնալիք եւ բռնութիւն.

Ահա ինչ է եղել այն չարիքը, որի դէմ մենք բողոքել ենք շարունակ.

Բռնութիւն ժողովրդական քւէի վրա, բռնութիւն լրագիր կարդացողների վրայ. հալածանք բողոքողների դէմ...

Այդ բոլորը արձանագրվեց մամուլի էջերում.

Եւ բողոքը արձագանք գտաւ հայ հասարակութեան սրտերում.

Ժամանակ էր սթափվել եւ զգաստանալ.

Բայց իւրաքանչիւր օրը մեզ բերում է նորութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ ցանած չար սերմերը այս ու այն անկիւնում պտուղներ են տալիս.

Ահա մի այդպիսի պտղի նմուշ մեր առջին է.

Ստորեւ տպում ենք մի նամակ, անգրագէտ գրված. որ մենք ստացանք քաղաքային պօստով.

Սա մի նոր նմուշ է ժամանակակից բարքերի, եւ թող հասարակութիւնը դատէ. թէ ինչ եղեռական հրապարակներ են ստեղծված հրապարակախօսի համար շնորհիւ այն մթնոլորտի, որ առաջացել է մեր «ազգային մոլխտապետների» քարոզներից.

Առ այժմ մենք առանձին կարեւորութիւն չենք տալիս նամակին, որովհետեւ նա անստորագիր է եւ մենք հրաժարվում ենք հաւատալ, որ կարող են մեր հասարակութեան մէջ այդպիսի նամակ գրողների խումբեր գտնվել երիտասարդների շրջանում.

Սակայն միթէ այդպիսի նամակները կանգ կ'առնեցնեն կասեն այն բուռն բողոքը, որ հայ հասարակութիւնը սկսել է արտայայտել ամէն կողմից արկածախնդիրների, գրական տրգրուկների եւ իրանց անձնական բարօյութիւնը, շահը հասարակական տառապանքի վրա հիմնած մարդկանց զզուելի գործունէութեան դէմ.

Մենք միայն մի բան ունենք ասելու, որ թող մասնաւոր «կամաւորներ» հանդէս չը գան իրանց այդպիսի անարգ յայտարարութիւններով, որովհետեւ նրանք, ցանկանալով այդ ձեւով պաշտպան հանդիսանալ իրանց իդէալօգներին. միայն վնասում են նրանց: Մենք այդ ասում ենք, որովհետեւ չենք ընդունում, որ մի այդպիսի նամակ հաւանութիւն գտնէր նրանց իդէալօգների ձուլարանում.

Ահա նամակը.

(*) Մ. Խ. Կը յանձնարարենք կարդալ «Մուրճ»ի 70րդ երեսէն սկսեալ հասկնալու համար որ արդի սերող դաշնակցական չէֆերը արդար բողոքը լռեցնելու համար գիտեն նաեւ խեղաթիւրել.

Մեծարոյ պ. խմբագիր!

Ահա բաւական ժամանակ է ինչ դուք սկսել էք դէպի Հ. Յ. Դ. դէմ ձեր լրագրի մէջ ամէն տեսակ պրովոկացիաներ որը թէ մի կազմակերպութեան եւ թէ մեր ամբողջ հայ ազգի համար խայտառակութիւն է. ուստի զգուշացնում ենք ձեզ որ դուք դադարեցնէք ձեր. «ազգի համար վնասակար ներկայ բոլէիս», այդ տեսակ ափեղցփեղութիւն, եւ վերջ տաք այդ տեսակ բամբասանքներին. ինչպէս օ.. Յովհաննեան դպրոցը եւ Հ. Յ. Դ.: հասկան է. գոնէ ամաչեցէք օտարազգիներից եւ այս դաժան բոպէներիս կառավարութեան ձեռքը միք տալ զանազան փաստաթղթեր, որով դուք կառավարութեանը իր նպատակին հասցրած կը լինէք. իսկ եթէ կը շարունակէք. այն ժամանակ մեր արդար գընտակը կը լինի ձեր բաժին եւ վերջ կը տայ այսքան խայտառակութեան հասցրած եմ, որ դուք այս նամակիս ոչ մի ուշադրութիւն չը պիտի տաք. յամենայն դէպս ժամանակը կը խօսի.

Մի խումբ երիտասարդներ

Թիֆլիս 2 նոյեմբերի «Մշակ»

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ

Ասկէց ամիսներ առաջ, «Շարժում» հրապարակը կ'առաջադրէր Վանայի հայ վաճառականական դասակարգին սեղմել իրենց շարքեր եւ հիմնել ԱԿՈՒՄԲ (գլիւպ) մը՝ սակայն ցաւ իւրը. մինչեւ այսօր նա միայն անլսելի ու անգործադրելի, թէ ինչու. չեմ կրնար ըմբռնել չըկա՞ս ա՛րդեօք մարդիկ որ ըմբռնեն ակումբի մը օգտակարութիւնը. ու բայց ահ կրնեն այդ առաջարկը:

Մենք հայերս ամէն բան գիտենք. կամ լաւ է ըսել՝ գիտակից ըլլալ կը կարծենք ու գիտակցութիւն չունինք. ամա ամէն բանի մէջ. այո՛ ամէն բանի ալ.

Ազգը ունի իր պահանջները. ընկերական կազմակերպութիւնը նոյնպէս ասոնց հակառակիլ անխոհեմութիւն իսկ անկումը շատ մօտիկ:

Մարդ մը շատ բան կրնայ գիտնալ. մտածել ու կը փափաքի ալ գործադրել. սակայն երբ առանձին է բան մ'ալ չ'կրնար, շատ շատ անձուկ շրջանակի մը մէջ. ուրիշ մը պէս վայրկ մը փայլիլ լուսաւորել ու անէանալ:

Վանայի գիտակից կարծեցեալ դասակարգը այսօր տարտղնած է, մէն մի անձ իրեն համար միայն կը մտածէ. հասարակութեան շահերը կանգիտանալ, սակայն իր կռուանը այդ անգիտացուած հասարակութիւնն է դարձեալ, դուցէ գիտէ, սակայն չուզեր ըմբռնել, թէ ինչու:

Վաճառականութիւնը, գործը միայն դրամով ու աշխատանքով չըլլար, քաղաքականութիւն ալ պէտք է. դիրքը բարձր պահելու համար, քաղաքացիական իրաւունքներու գիտակցութիւնը ու պահպանումը անհրաժեշտ է սակայն մենք այս մասին չենք մտածեր. կուզենք դրամ ունենալ ու ՊԱՐՒԱ-ի մը պէս ապրիլ:

Մօտիկ անցեալէն օրինակ մը շատ պարզ. շատ պատկերացուցիչ ու խրատական. Պուլկարիոյ ազատութենէն մինչեւ 1903 թուականը. հայերը Վանայի քաղաքապետութեան մէջ ունէին իրենց ներկայացուցիչը. բայց այսօր չունինք. թէ ինչո՞ւ. որովհետեւ այնքան միայն կրցեր էինք պահպանել մեր բրէստիժը տիրող տարրին առջեւ:

Ինչու չպիտի մոռնամ, ասկէց 4—5 տարիներ առաջ, դարձեալ քաղաքապետութեան ընտրութիւններու ժամանակ, երբ կուսակցութեան մը մէջ հարց կը ծագի ընտրելիներու ցանկը պատրաստել, անդամներէն մին կառաջարկէ հայերէն ալ ընտրելի մը ներմուծել ցանկին մէջ, եւ ասոր ի՞նչ պատասխան կուտան գիտէք միացած անդամները. «Հայերը գնչուներու պէս են, անոնք գիտակցութիւն չունին գործի վեհութեան մասին, ցանկին մէջ հայ ըլլայ թէ չըլլայ. անոնք կառավարականներու հետ կը ձայնակցին» եւ իրաւունք ունէին, որովհետեւ մենք մեր անտարբերութիւնով, անգիտակից գործի մեծութեան ու վեհութեան, գործիք միայն ուզած ենք հանդիսանալ զօրաւորին. թէ թին. էջ: Այո՛. մենք հայերս կորսնցուցինք մեր վարկը, մեր անտարբերութեան շնորհիւ եւ դեռ պիտի լինանք. Մտածենք, ոչ հայ քաղաքացիի մը բերնէն ելած այս խօսքին վրայ մտածենք լրջօրէն, տեսնենք հեռուն ու գործենք, եթէ կուզենք մարդու պէս ապրիլ ու հայ մեռնիլ:

Վանան այսօր ունի առնուազն 350 ձայնատու: Գիտէ՞ք վերջերս եղած քաղաքապետական ընտրութեան ժամանակ, մեր հոգաբարձուները քանի ձայնով ընտրուած են.—հազիւ 50 քուէով: հիմայ պահ մը մտածեցէք ու իրաւունք պիտի տաք որ մեզ գնչուներու կը նմանցնեն: Հոգաբարձութիւն դպրոց եւ կամ պ.պան. դպրոցն է որ ազգին սպասկան կը պատրաստէ. հոգաբարձութիւնն է որ դպրոցը կը կերտէ, իսկ մենք, անտարբեր, կորուստի կը մատնենք ապագան, միայն եւ միայն մեր անձը մտածելով. գլուխնիս պիտի ծեծենք ետքէն, սակայն արդէն շատ ուշ պիտի ըլլայ:

Եթէ կեանքի գիտակցութեան ու արժանապատուութեան նշոյլ կայ Վանայարնակ հայութեան բարձր դասակարգին մէջ. անդադար պիտի բռնէ սեղմէ իր շարքերը, հիմնէ իրեն ակումբը. որով աւելի հեշտօրէն պիտի կարենայ չփուիլ կոնսաֆ դասակարգին հետ ի պահանջել հարկին (վասնզի անոնք ունին իրենց ժողովատեղի ընթերցարանները) ու սեղմէ քաղաքական դիրք նոր հոսանք, որպէսզի գնչուի մը հետ բաղդատուելէ ազատի օտարին առջեւ. այլապէս թքել եմ ես այն հարստութեան վրայ որուն տէրը ոչ գիտակցութիւն եւ ոչ արժանապատուութիւն ունի:

Զ.

ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐԸ ԿԸ ՀՐՃՈՒԻՆ

Երէկ Ֆիլիպէի ժողովրդի դատակէն. որ շարունակ հանդէպ տեսքեր կուներ այդ քաղաքին տիրող դաշնակցականներու հետ. հետեւեալ նկա-

բացրութիւնը կստանամ՝ զոր կը ցուցադրէ պատկեր մը․ Վարդոյի վրայ կատարուած մահափորձէն յետոյ անմիջապէս ։

———

Գիշերուան ժամը 11ն է․ լուսինը իր ազատ ճառագայթները հազիւ կրնայ սողոսկեցնել Ֆիլիպէի լղճուկ մշուշոտ երկնքէն վար․ Մեծ պողոտային վրայ․ ուր ցրեկը թափեց Վարդօին արիւնը համախմբուած են մակարոյձներ—մասնաւոր վարժարանին տնօրէնը և տէրը․ ազգային փարաներով վիզը խոզի նման հաստցուցած, մակարոյձներու օսկանին խմբագրապետը․ և Վտարանդին ու ուչի ուշով կը դիտեն Վարդոյի արեան խոշոր բիծը․ եւ ամենուն դէմքերն ալ արտակարգ ուրախութեամբ կը փայլի… յանկարծ Պ.. կակաչ ճառել..․

․ Պարոններ, մակարոյձ ընկերներ, հոս այս գետնին վրայ, բարակով եւ սուտով, հաւատարիմ Ֆիլիպէն հիմնող Փիլիպոսի, Մակեդոնիոյ թագաւորին բամբին թէ «ոսկիով բեռցած իշուն առջեւ անանցանելի պարիսպ չը կայ», թափել տուինք այն Վարդոյին արիւնը, որ Թուրքերու ձեռքէն ճողոպրած էր մէկ քանի անգամ, իբրեւ հայ յեղափոխութեան կարեւոր դէմքերէն մին ։

Հայ յեղափոխականները սովորութիւն ունին վատ հայերը սպաննելու, մենք մակարոյձներս նորութիւն մը մտածեցինք․ սպաննել պէտք է Վարդոյին նման լաւ հայերը, որպէս զի մակարոյձներս կարենանք մեր գոյութիւնը շարունակել…

—Այո հրաշալի է այս քայլը, ընդմիջեց օսկանին խմբագրապետը, պէտք էր թափել անոր արիւնը այս մայթերուն վրայ․ ապուշը առանց ոճրիկի, ստակի տարիներով թերթ պահեր է Պուլկարիոյ մէջ, Դաշնակցութիւնը ամրացուցեր է․ այս գործնական գարուս մէջ երբ մեզի նման մակարոյձներու լեզէոն մը գոյութիւն ունի Դաշնակցութեան մէջ, միթէ՞ կարելի է թոյլ տալ անշահախնդրութեան գէշ օրինակ դարձող Վարդոյի մը ապրիլ մեր շարքերուն հայ ցեղին մէջ․ ոչ, ոչ, ատոնց թիւը եթէ շատնան ինձ նմանները ապուշութիններ արտադրելու համար ուրկէ պիտի կարենայիՆ 10 ոսկի վարձ, բնակարան եւ վառելիքստանալ ։ Այդ երազել անգամ չէր կրնար ես ի Պտրբուրգ։ Կեցցէ՛ք մակարոյձներդ որ այս կացութիւնը ստեղծած էք․ հրաշալի է։ Կեցցեն Վարդոյին արիւնը թափողները…

—Ճիշտ է ճիշտ․ պէտք էր Վարդոյի արիւնը թափել այս մայթերու վրայ, միջամտեց Վտարանդին․ իրօք Վարդօն մի ապուշ է․ ես Զուիցերիոյ մէջ փչացած, բարերարներիս յոյսերը խորտակած, պոոնկատներում եւ խաղատներում թափառող մի արարած էի․ Վարդօն Եւրոպա եկաւ․ աղաչեցի, պաղատեցի, խնդրեցի որ պէտք է փոխեմ, մարդ դառնամ միայն թէ ինձ գթար եւ ազատէր ։ Ու յիմարը գթաց․ խղճաց եւ բերեց այս կողմերը․ մոռանալով «դրտից սատկելու օձը, պռաշ իր տաքացնողին կը կծէ»։

Ես առաջ կարծում էի թէ միայն ես եմ մակարոյձ, բայց ուրախ եմ որ եկայ եւ ձեզ, ինձնից ոչ պակաս մակարոյձներիդ գտայ։ Ուրեմն կեցցէք դուք որ Վարդոյի արիւնը թափեցիք… հետեւեցէ՛ք, հետեւեցէք, հետեւեցէք հետեւեցէք մեզի պիտի գտամ ձեր օսկանին մէջ. հետեւեցէք դէպի խաղատուները, պոռնկատունները․ ախ ո՞ւր է Պորաֆէլս, մուսաս եկաւ, տուէք, գրեմ, Պ… ուսերդ դէպի ինձ պորտֆէլ» վրան դնեմ..

Վտարանդին ոչնչացուած բորթֆէլը կը բանար, երբ ճիվալէն, մակարոյձներուն մօտեցան խումբ մը օրիորդներ և կիկիններ…

—Բարով ձեզ, պարոններ, ալ ինչ է պ. Վտարանդի բանաստեղծութիւն կը գրէք․

—Այո․ Վարդոյի արիւնը ոգեւորեց ինձ․

—Ան ո՞ւր է հոս է․ թողուցէք տեսնանք, որչափ ուրախ ենք, անպիտանը կուզէ ձեր որջը քանդել հոս, մոռնալով որ մեր ընկերուհիներէն մէկ քանին ամուսնացան այդ որջին շնորհիւ․ ու մենք ալ կըապսենք այդ բախտին…

—Ախ օրիորդ, հառաչեց վտարանդին․ որչափ հրապուրիչ էք․ այս վայրկեանիս, մանաւանդ մեր մակաբոյծներիս մէջ, ուր չրջապատել ենք Վարդոյի արեան բիծը, լուսինն ալ վերեւից շողում է… "հետեւեցէք, հետեւեցէք, հետեւեցէք մեզի, դէպի . . . .

ԱՍԵՂ

ԿՈՉ ՄԸ ՀԱՅ ԶԻՆԻՈՐՆԵՐՈՒՆ

—o—

. . . Տէր խմբագիր,

Սրտի ցաւով կուգամ՝ք այս կոչը հրատարակել պատուական թերթիդ սուղ էջերուն մէջ իբրեւ տակցութիւն հայ զինուորին․

Սիրելի զինուորներ, այսօր ճիշդ կը թեւակոխենք երեքերորդ տարին զոր ձրիակեր փոհմաչները իրենց ապրուստի և ձրիակերութեան միջոցները ապահովելու համար սկսան եղբայր եղբօր դէմ զինել, սիրելի զինուորներ․ մեռնողներու նախակարապետ եղան հերոս Միսոն և Զիթճեան եղբայրասպանութեան սեւ գրօշը կնքելով Հ. Յ. Հնչեան կուսակցութեան ճակտին, բայց նորակոչմեալներն ալ չունեցան այնութիւնը որ նորոգ գտնուէին հանդէպ իրենց ոճրագործ եղբայրներուն, և կատարեցին նոյն գերը, փոխադարձը ապանեցին նրանց երեքը, ու այսօր տարիի մը կը մօտենայ թերթերու մէջ առարկայ եղած է Հայ Յ. Դաշ…եան և Հայ Յ. Հին Հնչակեան զինուորներու միջեւ կատարուած եղբայրասպան դէպքերը․ Սիրելի և աննման զինուորներ սթափեցէք ձեր թմբրած քունէն, որու է կը դարնէք և ինչ պարագաներու տակ կը գործէք այդ ոճիրը, սիրելիք հայ և հայաստանը թշնամիներ շատ ունի, այդ թանկագին կեանքերը իրարու ձեռքով մի ձգէք․ արհամարհեցէք այն եղբայրասպան հրամանները զոր կարձակուին ձրիակերներու խմբակէն, որովհետեւ թշնամիին դէմ արիւն թափողը դուք էք, իսկ ձեր պիտոյքը հոգացող մենք հայ ժողովուրդս, ձեր թանկագին արիւնովը ու մեր նպաստովը, ձեզ ձեզի սպաննել տալով իրենց կրքին գոհացում ու ապրուստի մի չոյները ապահովցնել ուզողները ճանչցէք ու մի կատարէք նրանց անարգ հրամանը։ Զինուորներ, դուք էք ապագայ յուսալի Հայաստանի զաւակները՝ դուք սրբեցէք նրա աչքերու դարաւոր դառն արտասուքը․ ուրեմն կեցցէ հայ ազնիւ զինուորութիւնը, կեցցէ յուսալի Հայաստանը․ անկցի՜ եղբայրասպանութիւնը։

Շաւարշ

18 Նոյմ. 1906
Քանատա Համիլթոն

ՈՒ՞ՆՉ ԿՈՒԶԷՔ ՎԱՐԴՕԷՆ

Կառավարութիւններն իսկ կը քննադատուին անհատի մը կամ խմբակի մը կողմէ. հրապարակաւ թերթերու մէջ իր անտեղի արարքներուն կամ կեղեքումներուն համար․ Բայց երբեք ներելի չէ այդ կառավարութեանը, բանի ուժով լռեցնել անհատին կամ խմբակին արդար բողոքը․ իսկ եթէ ինքնակալութիւն ըլլայ այդ ժամանակ միջոցներ չեն պակսիր իրեն լռեցնելու նոյն իսկ ամենաարդարացի բողոքները ։

Մենք որ ամենէ աւելի մաքառողը եղած ենք այն զարշելի ռեժիմին դէմ, որը կը բռնաբարէ ու կը լռեցնէ արդարութիւն, հաւասարութիւն, խղճի ու կամքի ազատութիւն պոռացող ձայները, բայց դեռ մեր մէջ կը գտնուին այնպիսիներ, որոնք առանց մտաբերելու իրենց պարտքն ու պահանջը, կ՚ելլեն որդեգրել իրենց ատած ռեժիմին էութիւնը, ու կուզեն լռեցնել իրենց եղբայրը, որ արդարութիւնը երեւան բերելու կաշխատի ։

Ահա քեզ պիտի ներկայացնեմ յարգելի ընթերցող բաժիս իսկապատկերը ։

Ինչպէս յայտնի է պ. Վարդօն տալէն աւելի է որ իր թերթին միջոցաւ երեւան հանեց կարգ մը իրողութիններ, որք գոյութիւն ունին, Հ. Յ. Դաշնակցութեան մէջ ։

Իսկ անզին Դաշնակցութիւնը առանց անոր գրածներն ու ըսածներն հերքելու, կուզէ իր բանի ուժով լը ռեցնել ան. կարծելով թէ կ՚ապահանայ իր գոյութեան ։

Ցաւալի բան որ Դաշնակցութիւնը չկրցաւ դատել թէ իր դէմը գտնուածը՝ Եր. Թշնամին չըլլալէն զատ այլ ապա Դաշնակցութիւնը իր բարձրութեան վրայ պահել ուզող անհատներէն մէկն է. եւ վերջապէս յաջողեցաւ Ֆիլիպէի մէջ ամսոյս 14ին «մահափորձի» ենթարկել յիշեալ պարոնը, մէկ քանի ոչխարամիտ մարդոց յանձնելով այդ վսեմ գործը, ըստ իրենց կարծեօք ։

Ահա ասկից կ՚սկսի աւելի հետաքրքրելին, Վարդօն իր բաց նամակները հրատարակելէն իվեր պժգանքով կը նային անոր վաղեմի բարեկամները որոնք ժամանակին փոչի չէին իջեցներ վրան ։

Ես կը հարցունեմ այդ պարոններուն թէ՝ ինչ բան կար որ այդքան շուտ մոռացութեան տուիք անոր անցեալին մէջ ունեցած կարեւոր դերը Դաշնակցութեան մէջ ։

Այդ պարոնիկները, այս ածականը գործածելուս համար ներեցէք ինձ որովհետեւ ատոնք ատկից աւելի բարձր ածականի մը արժանի չեն, առանց կարմրելու կըսեն թէ Վարդօն մեր եւ մեր բոլոր ընկերներուն ճակտեն քրտինքովը հաւաքուած 12,000 ֆրանքը իւրացուցած է. ինչպէս յայտարարած են Ֆիլիպէի պահականոյին մէջ (ըստ «Ռազմիկ»ի)

Ես որ կրցայ գոնէ քիչ բան մը ատոնց հոգեբանութեանը թափանցել․ ատոնք բոլորովին տարբեր են մեր կարծած ու ենթադրած մարդոցմէն. անոնք զպանակաւոր մեքենաներու պէս կը լարուին իրենց մասաւորականներէն ու ըստ այնմ կ՚սկսին յոզդոզդ կերպով քայլերնին դէպի յառաջ ուղել չուզելով տեսնալ թէ իրենց այդ քայլը վնասէ զատ օգտակարութիւն մը չէ ունեցած երբեք ։

Ու՛հ, ոչ դուք որ Վարդօն կուզէք մէջտեղէն վերցնել առարկելով թէ 12,000 ֆրանքը իւրացուցած է. ո՛չ պարոններ, ձեր ցաւը այլ է եւ տարբեր մարմնոյ վրայ կը կեդրոնանայ, որուն մարմինը քանկրէն եղած ու այլեւս ամենաճարտար բժիշկներն անգամ չպիտի կրնան բուժել․ եթէ վիրաւորը չ՚սթափի ու ինքը չըլլայ իր վէրքերուն սպեղանին դնողը ։

Այո՛ կուզէք վերցնել զայն որովհետեւ ձեր շահու աղբիւր ցամքեցնել կաշխատի․ եւ ձեզ նման հացկատակներուն ապրուստի միջոցը պակսելուն համար է որ փեչերնիդ ժողուած կաճապարէք համոզել կարգ մը ոչխարամիտներ թէ Վարդօն դրամը իւրացուցած, չարաչար էնթրիքան մէկն է․ Բայց դուք միայն Վարդօն վրտէք եւ անով միայն կզբաղիք չէք մտածեր անգամ մը թէ, ան ալ իր համակիրները ունի որոնք չեն նմանիր ձեր ոչխարամիտ հետեւորդներուն. ուստի քիչ մ՚ալ ձեր խղճի ձայնին լսեցէք, եւ մի՛ մոռնաք թէ դուք եղած էք ամենէ աւելի եղբայրասպանութիւնը ատողը եւ մի՛ կոխէք ձեր ձեռքը այնպիսի մարդու մը արեան մէջ որը վերջէն պիտի զղջաք ու յետոյ ձեզ աւելի սուղի պիտի նստի, եւ պիտի պժգայ համայն հայութիւնը ձեզ, «եղբայրասպան խմբակ» գոչելով ։

Սպասեցէք քիչ մ՚ալ ահա մի քանի օրէն Ընդհ. Պատգամաւորական ժողովը տեղի պիտի ունենայ եւ անկից վերջն է որ ան կամ դուք ճակատաբաց դուրս պիտ՛ գաք ըսելով․ ահա ան ու մենք․ եւ այն ժամանակ այդ պարտքը միայն ժողովրդինն է դատել ու ըստ այնմ իր կարծիքը յայտնել ։

ՇԱՒՕ

( ) Մ Խ. Հակառակ պաշտօնական արգելքի այդ դրամները իր մօտ գտնուիլը արդէն յայտարարած էր Վարդօն «Շարժումի մէջ ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Վարդանեան վարժարանի պատ. ուսուցչական մարմինը՝ և բէկ կոչ մը ուղղելով քաղաքիս արգոյ Հայ Հասարակութեան՝ զգացուցած էր թէ պատ. Թաղ. Խորհրդոյ անըմբռնելի ընթացքին հետեւանօք դպրոցը անկանոնութեան ենթարկուած է և թէ հայ իւրաքանչիւր երկսեռ մանուկներ՝ ուսումէ և կրթութենէ զրկելով փողոցները ման կուգան։

Պարտք կը համարինք ներկայիս յայտնել կրթասէր ճումլուցիներուն թէ կատարելապէս ճիշտ է պատ. ուսուցչական մարմնոյն կարծիքը։

Տարիներու ընթացքին մէջ, պատ. թաղ. խորհուրդը՝ ինչպէս որ իր պարտքն է՝ նիւթապէս օգնած է վարժարանին, այսպէս 1895ին 1626 ֆր. տուած է հոգաբարձութեան, 1896ին՝ 1068 ֆր., 1897ին՝ 1886 ֆ., 1898ին 3763 ֆ., 1899ին՝ 2604 ֆր. 1900ին՝ 2590 ֆր., 1901ին՝ 2083 ֆր. 1202—1903ին՝ 2708 ֆր., 1904ին՝ 1832 ֆ. 1905ին 1870 ֆր.

Միայն մեր օրըմն է որ պատ. թաղ. խորհուրդը, չենք գիտեր ինչ խորհրդաւոր պատճառներով չի բարեհաճիր դպրոցին նիւթապէս օժանդակել և կը հանդուրժէ որ մէկ տարուան մէջ անիկայ երկու անգամ փակուի։

Տարիներ առաջ, երբ եկեղեցին 8000 ֆր. պարտք ունէր, պատ. թաղ. խորհուրդ կը փութար հարիւրին 24 տոկոսով ըստակ ճարել։ Հիմա որ եկեղեցին 2000 ֆր. պարտք ունի՝ նոյն պատ. թաղ խորհուրդը չուզեր հարիւրին 10ով փոխառութիւն ընել, չը նայելով որ հոգաբարձութիւնս ալ պատրաստակամութիւն կը յայտնէ հաւասար պատասխանատուութիւն ստանձնել։

Ինչո՞ւ պատ. թաղ. խորհուրդը կը խոստանայ, կը մերժէ, կը վարանի, կը տատամսի եւ... դպրոցին փակման տեղի կուտայ։

Արդ քանի որ պատ. թաղ. խորհուրդը ուխտած է իր նիւթական աջակցութիւնը զլանալ դպրոցին, մենք՝ հոգաբարձուներս, ստիպուած, այսուհետեւ պիտի կրնանք միայն մէկ կարգ պահել՝ երկու ուսուցիչով, և ոովհետեւ մեր նիւթական միջոցները չեն ներեր՝ Տիար և Տիկին Տաքէսեանի տարեթոշակը չպիտի կրնանք ապահովցնել...

Կրթասէր ճումլուցիներ, ձեզ կը մնայ երկու պաշտօնական մարմիններէն բացատրութիւն պահանջել, դատել և վճռել։

Ամօթ է մեր համայնքին՝ որ այսպիսի արգահատելի կացութեան մը հանդիպատես կըլլայ։

Ի դիմաց Հոգաբարձութեան
Ատենադպիր Ատենապետ
Յ. Իշխանեան Գ. Սամոյլեան
Ճումլա 19 Հոկտ. 1906

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Փիլիպէ. — Պարոն Պետօ. — ստացանք ձեր նամակը, որուն մէջ մանրամասնաբար նկարագրած էիք տեղւոյդ գաշնակցական չեփերուն թելադրած ու կազմակերպած ստոր մահափորձը թեր թիս խմբագիր պ. Վարդօի անձին դէմ։ Սակայն արդէն մանրամասն գրուած ըլլալուն պատճառաւ աւելորդ կը համարենք կրկնել այդ դաշնակցութեան անունը արատաւորող տխուր նկարագրութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տաթեւս մէջ կառավարական մարմնի մէջ մասնակի փոփոխութիւն մը տեղի ունեցաւ։ Երկրիս նախարարապետ պարոն Րաչօ Բէգրով, Ն. Ա. Բ. ներկայացուց նախարարութեան հրաժարականը, այս հրաժարականը վայրկեան մը զբաղեցուց մտքերը որովհետեւ անսպասելի էր։ Ն. Ա. Բարձրութիւնը ընդունելով նախարարութեան հրաժարականը ու պարոն Բէգրովին յանձնեց անոր կազմակերպումը։ Ներկայ նախարարութեան մէջ կը մնան նախկին նախարարները. միայն նորամուտ է պ. Սգանչէֆ, որպէս արտաքին գործոց նախարար. Պ. Սգանչէֆ 10 տարիներէն ի վեր, երկրիս իշխանութեան ներկայացուցիչն էր եղած ռուս կառավարութեան մօտ։

— Ն. Ա. Բարձրութիւնը, երկրիս իշխանը, որ տասնեակ օրերէ ի վեր կը գտնուի քաղաքէս մէկ ժամ հեռու Էվքսինոկրատի պալատին մէջ, անցեալ օր, իր քոյրը Պլոգիլտա դքսուհիին հետ միասին քաղաքիս մէջ պտոյտ մը ըրաւ։

Վայրկեանի մը մէջ քաղաքիս գլխաւոր պողոտային վրայ ժողովեցաւ խուռն բազմութիւն մը, երեխան ու ծերունին, պատանին ու հասունցած մարդը հրճուանք մը կը զգար իր սրտին մէջ, տեսնելով Ն. Ա. Բարձրութիւնը՝ իրեն շատ մօտ, որ զգուշալից աչեր կը յառէր ամենուն վրայ ժպտալից։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Արաբական շարժումը գործնականացած է ծաւալիլ։ Պոլսոյ գինուորական դատաստանութիւնը մեծամասնութեան մէջ է, չգիտեր ինչ ընելիքը։ Մէկ կողմանէ զինուորական ոտքը, միւս կողմանէ փոխադրութեան դժուարութիւնները մտքերը կը զբաղեցնեն։ Հայոց անուն բերդը որ կը գտնուի Հիճազի և Եէմէնի միջև ապստամբութեան դրօշը պարզած է, կերեւի թէ այս շարժումը շատոնց ի վեր կը պատրաստուէր և անշուշտ ունի վահապետներու պետ Մահմուտ Նահեայի յառաջխաղացութեան հետ՝ որ կը պատրաստուի եէ մէնի մայրաքաղաքը համարուող Սանաան պաշարել։ Այս շարժումը խեղդելու համար բազմաթիւ բանակի մը պէտքը կը զգացուի։

— Անգլիոյ արտաքին գործոց նախարար Սըր Էտուարտ Կրէյ, երեսփոխանական ժողովին մէջ յայտարարած է թէ՝ Մեծ Բրիտանիոյ հպատակներու վկայութիւններու վրայ հիմնուելով, ներկայ տարւոյս Յունուար 1 էն մինչեւ 30 Սեպտեմբեր Մակեդոնիոյ Սելանիկ նահանգին մէջ 577 հոգի, և Մոնաստիրի նահանգին մէջ 481 հոգի կան սպաննուած։

ՌՈՒՍԻԱ

«Թովարիշչ» լրագրին գրածին համաձայն, Ռուսիոյ մէջ զինուորական դատարանները տենդագին գործառնութիւն մը ցոյց կուտան. Ներկայ ամսոյս 7էն մինչեւ 22ը 36 հոգի դատապարտուած են մահու։ Այս զինուորական դատարաններուն գործի սկսելէն ի վեր 218 հոգի մահուան դատապարտուած են։

— Կառավարական քննիչը, նախարարական խորհրդին ներկայացուցիր է իր տեղեկագիրը, Ռուս ճապոնական պատերազմի ծախսերու մասին։ Այս տեղեկագրէն կը տեսնուի թէ՝ եղած ծախսերը մէկ միլիառ և 780 միլիոն ռուբլիի կը յանգին։

— Պետերսպուրկէն կիմացնեն թէ՝ նորակոչ զինուորներէն խումբ մը Սարադովի մէջ ցոյց մը ըրեր են, Մարսէյեզը երգելով։ Այս նորակոչ զինուորներու չորս կողմը կը խմբուի խուռն բազմութիւն մը, որ կը սկսի նոյնպէս յեղափոխական երգեր երգել։ Նորակոչ զինուորները յայտարարեր են թէ՝ ոչ մէկ կերպով զօրանոցները չպիտի երթան։

— Անցեալ կիւրակի գիշեր 7 մարդիկ, դիմակաւորուած մտեր են Լոքեանովսքեա վանքին մէջ, վեցհարուածեանի զարկով սպաններ են վանահայրը, որբ զայ մը և լուսարարապետը, ու անկէց ետքը զողնալով եկեղեցական շատ մը թանկագին սպասներ և մեծ գումար մը առեր գացեր են։

— Ինչպէս Վ էւէր Թագէպ. լաթ» լրագրի Պետերսպուրկեան թղթակիցը, զօրավար Ռոսսէլի հետ ունեցած մէկ տեսակցութեան մէջ՝ այս վերջինս յայտարարած է թէ՝ Բորթ Արթուրին անձնատուր լինելը անխուսափելի էր, յարելով թէ՝ ճապոնացիները Բորդաւն տի խաղացութեան գաղտնագրի կնքումէն գոհ չեն և անհրաժեշտ կերպով նոր պատերազմի մը համար պատրաստութիւններ կը տեսնեն։

— Պետերսպուրկի փամփուշտի գործարանին մէջ, երբ որ աշխատք կըլլար, խումբ մը գործաւորներ կը սկսին Մարսէյեզը երգել, և անմիջապէս ետքը աշխատքը կը ձգեն ու կանցնին կերթան։ Կառավարչութիւնը կը սպառնայ գործարանը փակել։

ՖՐԱՆՍԱ

Նորակազմ Կլէմանսօ—Բիքար նախարարութիւնը արդէն ներկայացեր է երեսփոխանական ժողովի ու ծերակոյտին առջեւ պարզեր է նորեկ կառավարութեան ծրագիրը։ Այս ծրագրին առաջին մասը կը կազմէ եկեղեցական հարցը, զինուորական դատարաններու բարձումը։

Խաղաղութեան ժամանակ մահուան պատժին ոչնչացումը, այսպէս և ուրիշ պատժական օրէնքներու միզմացումը և այլն։ Կլէմանսօի կազմակերպած նախարարութեան ծրագիրը հաւանական է որ հանրապետականներու շրջանին մէջ ընդդիմադրութեան չը հանդիպի։

ԱՆԳԼԻԱ

Անցեալ տարուան երեսփոխանական ժողովին մէջ անգլիական կառավարութիւնը օրէնք մը առաջարկեց, որ և ընդունուեցաւ. ազգային դպրոցներու մասին։ Այս օրէնքը կը տրամադրէ, այն դպրոցները որ տուրքերէ հաւաքուած դրամով կը պահուին, պէտք է ազգին կողմանէ ընտրուած հոգաբարձուներով կառավարուին. Նոյնպէս դպրոցներէ կը վտարուի եկեղեցական ազդեցութիւնը, որ շատ մը դպրոցներու մէջ ի գործ կը դրուէր անգլիական եկեղեցու կողմանէ։ Այս օրէնքին կը հակառակի վերին դահլիճը, սակայն Գամպէլ Պէնէրմանի կառավարութիւնը հաստատակամութեամբ միտքը դրած է այս օրէնքը գործադրութեան դնել ամէն գնով։

Печатница на П. Глушковъ С Вар